ՃԱՌՔ

Ի՛նչպէս անցեալ Թուով յիշեցինք և խոստացանք Ս. Կաթողիկոսի Օծման Տարեդարձին և Ս. Էջմիածնի տօնին օրերը ընթերցեալ ճառերը հաղորդել մեր ազգայնոց, ահաւասիկ հետևեալքն են։

(Ի Մոսկուա ընթերցեալ.)

ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ.

Շքեղապսակ աւուրս պատկառելի հանդէս խրախուսէ զեռանդն ուրախութեան ի սիրտս համօրէն ազգիս Հայոց որդւոց մօրս լուսոյ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. քանզի այսօր հանդիսանայ յամենեսին յիշատակ չորրորդ Տարեդարձի բազմելոյ Սրբազնասուրբ Հայրապետիդ յԱստուածահաստատ ի Գահ Մեծի Քահանայապետին, պարծանաց սրբոյ Եկեղեցւոյս, սրբոյն Գրիգորի Պարթևի առաքելապատիւ Լուսաւորչի Հայկական սերնդոցս Ո՛վ մեծի շնորհացն Աստուծոյ. պարգևեցաւ նա Հայր և Հովիւ հրեշտակահանգոյն՝ փոքու հօտիս մերոյ, զցրուեալս ժողովել ի փարախ Քրիստոսեան տաճարին, յանձանձելով զնոսա սրբութեամբ և հաստատութեամբ կաթին փրկութեան, ըստ աւետեաց երկնապատգամ ձայնին, և նովաւ հրաշագործեաց Աստուած ի Հայս և փըրկեաց զնոսա ի մոլար կռամոլութենէ, արդ և ի ձեռն ընտրելոյդ ի նմանէ, Վեհափառ Տէր՝ ի նոյն անդաստանս երջանիկ կենդանութեան. Հայրն երկնաւոր մակաղէ զբանաւոր հօտ իւր. անքոյթ և անսասան պահպանել զգնեալսն արեամբ գառինն անարատի ի չար կորստեան ճանապարհաց, հանգուցեալ ի նաւահանգիստ երանութեան և խաղաղութեան անմատչելիս ի հողմայարոյց և ի յարածուփ ալեաց մշտատատան ծովու կենցաղոյս, որ ընդ օրինակել զերկիրն եդեմական դրախտին, և ահա յաւիտենական արձանն յիշատակի մարդկային փրկութեան լեառն սուրբ Մասիս մերկանալոց է զ.քօղ տխրութեան աղջամուղջ խաւարին փայլելով յամպաճեմ գագաթանէն զոսկեծոյլ և զընդարձակածաւալ ծիրանանեկ զգարնանային ճառագայթս արդարութեան և խընդութեան բանալով զառագաստ անարատութեան սրբոյ Եկեղեցւոյս. և տեղի տուեալ ի հրաւիրանս զՓեսայն սրբոյ Եկեղեցւոյն, և ահա ի սերկեան աւուրս հոյլք նուակածուք, մխիթարութիւնն և յոյսն Հայաստանի առատանան և՛ ըերկրին իջանելով ի բարձրութենէն երկնից արագասլաց սաւառմամբ յերկիրս Հայաստան, յորմէ երբեմն Նոյեան աղաւնին հոլաթևեալ վերասլանայր ի բարձրութիւն առ Հայրն համօրէն աղանց զշիւղ նորընձիւղ ձիթենոյն առեալ ի բերան՝ և թևածեալ զՏապանաւն անդրէն վերասլանան և հանգչին ի սիրտս ապագայ սերնդոց որդւոց Հայաստանի. որդւոցն Աստուծոյ ըստ Ներկայիս առհաւատչէիցն յոլովութեան. Ընդ նոցին բերկրին Վեհափառ Տէր խնամեալքն ի գութս տիրականդ անձանձիր և արթուն հսկողութեան, զպատուականն և զզանցեալն ասեմ, ո՜ն և ո՜ն արդէն ի համախմբեալս յոտս Գերագահ Հայրապետիդ սրտեռանդն խրախճանք սրտից ի սիրտս հոլաթևեն և խաղապատեն ի կատարումն Չորրորդ Տարեդարձի Սրբազնագործ Հովուապետիդ ազգիս Հայոց. ցընծայ և այսօր Մայրս մեր սուրբ Սիօն, զի ի վերինն տեսչութենէ շնորհեցաւ նմա Քահանայապետ քաջ և երկնաւոր պարգևօք զարդարեալ ի լուսաւորութիւն համայն ազգիս. Արդարև ժառանգդ Քահանայապետութեան Ս. Գրիգորի՝ նմին նման ջանիւք և քրտնաջան վաստակօք ի հոգս տքնիք ազգիս և եկեղեցւոյս, զկենդանացելոյ և աճեցելոյ վաստակօք արեան երանելոյ սրբոյ Հօտապետին՝ և ի լուսաւորութիւն ազգիս հանդիսանայք. գերապանծութեամբ նա՛ թէ բարգաւաճեալ զեկեղեցի Երկնային Փեսային շքեղազարդ պայծառութեամբ ըրվառն և գաւք մուսայից սխթևեթեալ զլար քնարից իւրեանց ի մի սրտագրաւ նուագ հնչեցուցանեն զքաղցրանուագ երգս տիեզերահռչակ և տօնելի Տարեդարձի Աստուածահաճոյ Հայրապետիդ և միակ մխիթարութեանդ տանս Թորգոմեան և զանուն Ազգասիրութեանդ գեղգեղեն ի համայն սիրտս ընդհանրութեան Ազգիս.

Ահա յիրաշխս սրտից ընդհանրից, որդիք Վեհափառ Տէրութեանդ՝ Սրբազան գումար հոգևորականաց և աշխարհականաց խոնարհեալ առա-

ջի Վեհիդ՝ օրհնեն զկեանս Հայրապետիդ ազգիս Հայոց և ակն ունին Տիրականդ սուրբ օրհնութեան. արդ և օրհնեա Վեհափառ Տէր զմիաբանական ուխտ սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, և զՀամայն որդիս Հայկականս և կառկառեա զԱՐ օրհնութեան Դիտապետիդ ի ծառայս Ձերոյին Վեհափառութեան, առ որս փափագին կաթին երկնաձիր օրհնութեանցդ և համանգամայն յեռանդս սրտիցն խրախացեալ, մշտահայց մաղթանոք խնդրեն յԱմենակալ և յԱմենախնամ մեծութենէն Աստուծոյ շնորհողն գ.բրտնաջան Քահանայապետդ ազգիս Արամեան, զի Արարչական մարդասիրութեամբն իւրով պահպանեսցէ զՎեհափառ Տէրդ մեր յաւերժական բարօրութեամբ անսասան ի պարծանս և ի մխիթարութիւն սրբոյ Եկեղեցւոյս և Ազգիս Հայոց և յամենամոք երկարատեւս արասցէ զթել ոսկեղենի կենաց մեծի Վեհիդ. ամէն.

Ո-ը. Հ. Տ. Արքեպ.

(Ի ուրեմնապահ)

ԱՍՏՈՒԱԾԱՄԵԾԱՐ ՏԷՐ

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՕԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԱՊՍԱԿ ԴԼԽՈՅԴ.

Նախանձելի ժողովս՝ որ մեծաւ հանդիսիւ հրաշացուցանէ ամ յամէ զխորհրդաւոր տարեդարձ երիցս երանեալ Հօրդ ո՛չ այնպէս ի հարկէ ինչ ստիպեալ՝ որպէս յեռանդագին շարժեալ ի սիրոյ՝ ցնծալ բերկրի և գոլանօք համբուրելով զյիշատակ աւուրս, մերկանալ այսօր զանկէղծ ուրախութիւն սրտի իւրոյ մատուցանելով զանձնանուէր սէր որդիական հարազատութեան՝ Ձերում Աստուածաշնորհ Հօր. այսպէս և ազգ մեր՝ որ զբրկեալ յամենայն շքեղութենէ՝ անմխիթար սրտիւք ողբայ զկորուստ իւր, յիշատակաւ աւուրս թող բերկրիցի հոգեշարժ խնդութեամբ ընդ նորոգ փառս իւր. զի փառք իշխանութեան Ձերում՝ փառք և պարծանք են Հայկազեանս ազգի, որք անաղօտ պահեն զվեհապանծ անուն ազգութեան մերոյ և ի ժամանակս այս, թէև առելութեամբ կորուսեալ զմեծամեծս, գէթ սիրով հաստատուն պահեսցուք զիշխանութիւնդ՝ զորոյ զփառս դրուատեմք սրբատաշարժ բերկրանօք, և որով թնդայ ուրախութեամբ Հայաստան մայր մեր.

Արդարև քաղցր է խնդութիւնս այս, և ախորժալի ամենեցուն, նաև պարտք իսկ բնութեանս մերոյ. քանզի եթէ իշխան ոք՝ որ զՀպատակս՝ իբրև զորդիս իւր ընդունիցի, երջանկութիւն նոցա՝ փառք անձին համարիցի, հարստութիւն իւր՝ ի սրտի նոցա ամրարեալ ունիցի, ուրախութիւն իւր՝ յաշխատանս և ի բարեգործութիւնս նոցա եղիցի, զայր Համն ոչ յաւագ աստիճանի ունիցի՝ և ոչ զՄուրթքէ յանարգ, յամենայն հոգս իւր՝ ապահովութիւն և երանութիւն կենաց ժողովրդոց լինիցի, և միով բանիւ զերթ Աստուած՝ յաթոռս մարդկութեան բազմեալ լինիցի. զի՞ նէ ապա ժողովրդոց. մեայ նոցա զինքեանս գլխովին նուիրել ի տրիտուր նորին բարերարութեանց. զամենայն աւուրս կենաց իւրեանց կանգնել մեն մի նշան ի փառս նորա. տիսորժալուր զանուն նորին անջինջ գրոշմել ի սրտի իւրեանց. անմահացուցանել զնա, պատմելով հաց որդւոց՝ զերջանկութիւն կենաց իւրեանց առ բարեկամ իշխանաւն, և որդիք ցերթոռունս, այսպէս ազգէ յազգ անկորուստ պահել զյիշատակ նորա, Ի դէպ գոյ այսօր և մեզ, փող հարկանել ի գլուխս ամենց աւուր նշանաւորի տարեկանացս մերոց վասն զի ինքն բարձրեալն Աստուած զթալով յազգս տառապեալ՝ բարձրացոյց զՁեզ յայլ Աթոռ Լուսաւորչեան՝ արժանընտիր Հօրդ՝ արժանընտիր գահ. որ զամենայն յաւելութիւնս բարեգործ իշխանին ի Ձեզ լրիւ տեսանեմք.

Վասն զի յորմէ հետէ առիք յԱստուածոյ զիշխանութիւնդ՝ անդուլ և անդադար վաղվաղէք մի գկնի միոյ կատարել զամենայն պարտաւորութիւնս՝ որ անկ է Ձերում Վեհափառութեան. Ամէն արդ. գերամեծար գործք մեծագործ Վեհիդ՝ անարժան կացուցանէ զնա առ ի դրուատել, այլ արժան էր անձին ճարտարախօսի մտանել յայս հանդէս ցանկալի՝ և վսեմագոյն բանիւ թուել զամենեսին ի լուր հանդիսականացս և ի մխիթարութիւն հայրենեաց. զի ահա աշխատութեամբ Ձերով յորդեցան յոգնասեռ աղբիւրք